«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 25.07.2017թ. ժամը 15:00

Համաձայն 07.07.2017թ. թիվ 10/11763-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահսկելագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝13.07.2017թ-ին Նելլի Սիմոնյանից ստացված դիմումը քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հուլիսի 25-ին ժամը 15.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը:
Դիմումատու՝ քաղաքացի Նելլի Սիմոնյանին չեր ծանուցվել քանի որ նա գնտվում է Հանրապետությունից դուրս,ուստի նիստին չէր մասնակցում:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Քաղաքացի Նելլի Սիմոնյանի ՀՀ Վարչապետ Կարեն Կարապետյանին ուղղված դիմումի հիմքով,քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի, գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝

Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, քաղաքացի Նելլի Սիմոնյանի ՀՀ Վարչապետ Կարեն Կարապետյանին ուղղված դիմումը և կից փաստաթղթերը,նշելով որ Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ է հանդիսանում՝ Հովհաննես Սողոմոնյանը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

07.07.2017թ. թիվ 10/11763-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահսկելագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝13.07.2017թ-ին Նելլի Սիմոնյանից ստացված դիմումը

քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված դիմումը և կից փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները,սնանկության գործով կառավարիչ՝ քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի, գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:

Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Խալաթյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող սնանկության գործով կառավարիչ՝Հ.Սողոմոնյանին և նրա ներկայացրած փաստարկները:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց,սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանին,ով մասնավորապես նշեց,որ քաղաքացի Նելլի Սիմոնյանը,Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.10.2016թ-ի ԵԷԴ/0101/04/15 վճռով ճանաչվել է սնանկ,նույն դատարանի 28.10.2015թ-ի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ինքը,որից հետո ձեռնամուխ է եղել քաղաքացու գույքի այդ թվում նաև անշարժ և շարժական գույքի հայտնաբերման և գույքագրման աշխատանքներին:Որոնողական աշխատանքների արդյունքում,այդ թվում նաև պարտապանի և պարտապանի գույքի հետախուզման միջոցով,հնարավոր չի եղել հայտնաբերել պարտապանին,բայց հայտնաբերվել է անշարժ գույքը ք.Երևան,Լոմոնոսովի փող.30 հասցեյում,որի գույքագրման նպատակով ծանուցվել են պարտատերերը և պարտապանը և գույքագրման օր է նշանակվել 17.05.2017թ-ի ժամը 11.30:Նշանակված օրը պարտատերերի հետ միասին այցելել ենք ք.Երևան,Լոմոնոսովի փող.30 հասցե,որը փակ լինելու և պատասխանատու մարդ չլինելու պատճառով հնարավոր չի եղել այդ օրը իրականացնել անշարժ գույքի գույքագրումը:Գույքագրումը իրականացնելու համար օրը տեղափոխվել է 01.06.2017թ-ին և մինչ այդ իմ կողմից դիմվել է ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի Վարչության Էրեբունի բաժնի պետին և խնդրել եմ ապահովվել համապատասխան աշխատակցի ներկայությունը 01.06.2017թ-ին ժամը 12-ին ք.Երևան,Լոմոնոսովի փող.30 հասցեյում տեղի ունենալիք գույքագրման աշխատանքներին: Նշանակված օրը ներկա գտնվող ՀՀ Ոստիկանության աշխատակցի, պարտատիրոջ,կառավարչի,կառավարչի խորհրդական-մասնագետի ներկայությամբ այցելել ենք հասցե,որը այդ անգամ էլ փակ էր ուստի մասնագետ Անդրանիկ Երանյանի օգնությամբ բացվել է տան դուռը և նշված գույքագրման մասնակիցների ներկայությամբ գույքագրվել է գույքը,լուսանկարվել է ամբողջը և կազմվել է արձանագրություն այդ մասին որի տակ ստորագրել են ներկա գտնվողները:

Ներկայումս անշարժ գույքը գտնվում է կառավարչի պահպանության տակ,որը պետք է իրացվի հրապարակային սակարկությունների միջոցով և մարվի պարտապան Նելլի Սիմոնյանի պարտավորությունները պարտատերերի հանդեպ:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին թե ինչ կարգով է կատարվում անշարժ գույքի պահպանությունը:Սնանկության գործով կառավարիչ՝Հ.Սողոմոնյանը պատասխանեց,որ պահպանության համար փոխվել են տան մուտքի դռան փականները և պահպանությունը իրականացվում է կառավարչի միջոցով:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում նշված փաստերի համադրումից պարզ է որ քաղաքացին տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի առկայությունից,իր պարտավորություններից,բայց օգտվում է փորձում է օգտվել այն հանգամանքից որ ինքը բացակայում է հանրապետությունից և չապահովվելով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը գույքագրման,դրանով փորձում է խոչնդոտել կառավարչի աշխատանքներին և դիմումն էլ այդ նպատակով է գրվել է նշում է որ տանը առկա էին թանկարժեք իրեր,որոնք և փականը ջարդելու փաստերը ըստ էության չեն համապատասխանում

իրականությանը,քանի որ կառավարչի ներկայացրած փաստաթղթերից պարզ երևում է,որ կառավարչի կողմից կատարվել են բոլոր հնարավոր քայլերը պարտապանին հայտնաբերելու և նրա ներկայությամբ գույքագրում կատարելու համար,բայց այդ քայլերը արդյունք չեն տվել,որից հետո կառավարչին չի մնացել այլ ելք քան անշարժ գույք մուտք գործել առանց պարտապանի կամ նրա ներկայացուցչի,որը իր կարծիքով այս պարագայում միակ հնարավոր միջոցն է գույքի գույքագրման և հետագայում նրա իրացման միջոցով պահանջների բավարարման համար:

Այսինքն իր կարծիքով կառավարչի գործողությունները եղել են իրավաչափ և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում պարտապանի գույքի գույքագրման պրակտիկորեն կատարվում է գույքի որոնողական աշխատանքների արդյունքում,որոնք որոշ դեպքերում հայտնաբերումից հետո պարզվում է,որ անշարժ գույք մուտք գործելը հնարավոր չէ պարտապանի կամ որևե բնակչի բացակայության պատճառով,որը խոչնդոտում է կառավարչի գործողությունները և սպառում լրացուցիչ ժամանակ և միջոցներ պարտապանին հայտնաբերելու վրա,որը բերում է պարտատերերի դժգոհությանը և սնանկության բնականոն գործընթացների խոչնդոտմանը:Տվյալ դեպքում սնանկության գործով կառավարչի կողմից սպառվել են այն գործողությունների հնարավորությունները որոնք վերաբերվել են պարտապանին կամ նրա լիազոր անձանց հայտնաբերելու ուղղությամբ,որը կարող էր հանգեցնել սնանկության գործընթացների խաթարման և կառավարիչը պահպանելով բոլոր հնարավոր սահմանված միջոցները մուտք է գործել անշարժ գույքի տարածք և որպես սեփականատիրոջ անունից հանդես եկող անձ անշարժ գույքը վերցրել է իր պահպանության տակ,որը ապահովվել է սնանկության գործընթացի բնականոն ընթացքը և չի վտանգել պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը ու միաժամանակ ապահովվել է հետագայում անշարժ գույքի անվտանգությունը հնարավոր կորստներից:

Բայց նախագահողը նշեց նաև որ կառավարչի կողմից անշարժ գույքի ներսում գտնվող գույքի վերաբերյալ չի կատարվել սպառիչ գործողություններ և այդ մասին փորձեր չի կատարվել տեղեկացնել սեփականատիրոջը կամ նրա ներկայացուցչին,որը չի բխում պարտապանի շահերից և կարող էր բերել նրա իրավունքների խախտմանը:

«Սնանկության գործով կառավարիչի վարքագծի Կանոնագրքի» 2-րդ հոդվածի 2.1 մաս.

-Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է խուսափել այնպիսի գործողությունների իրականացումից,որոնք խախտում են սնանկության վարույթի մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը:

1-ին հոդվածի 1.7 մաս.

- .... Սնանկության գործով կառավարիչը ընդունում է որոշումներ,իր գործողությունները իրականացնում է միայն պատշաճ տեղեկատվության ապահովման միջոցով:

Համադրելով փաստերը քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը իր գործողություններով խախտել է սեփականատիրոջ պարտապանի իրավունները մուտք գործելով նրա սեփական տարածք,առանց սեփականատիրոջ թույլտվության կամ ներկայության,բայց հաշվի առնելով որ կառավարիչը իրականացնում է գույքագրում և իր հերթին պարտապանը նույնպես ունի պարտականություն օժանդակելու գույքագրմանը և ներկայացնելու իր գույքը կառավարչին,որը պարտապանի կողմից չի կատարվել,որի հետևանքով էլ կառավարիչը իր եղած միջոցներով է կատարել գույքագրումը:

Բացի դրանից կառավարիչը ի պահ է վերցրել անշարժ գույի մեջ գտնվող իրերը,բայց դրա մասին պատշաճ տեղեկատվություն չի ապահովվել,որը ներոգրյալ Կանոնագրքի 1-ին հոդվածի 1.7 մասի խախտում է,որի համար նախագահն առաջարկեց քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանին ենթարկել կարգապահական տույժի:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Ա.Էլոյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը արտահայտեց այն կարծիքը որ ինքը համաձայն է որ կառավարչի կողմից խախտվել է Կանոնագրքի 1-ին հոդվածի 1.7 մասով նախատեսված

տեղեկատվության ապահովվում,իսկ մնացած մասով իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով, առաջարկեց հայտարարել բանավոր նկատողություն և սահմանել ժամկետ խախտումը վերացնելու համար:

Հանձնաժողովի անդամ Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեց այն մտքին,որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի խախտումներ այլ առկա են գործողությունների մասին չտեղեկացնելու փաստը,որը կարելի վերագրել վարքագծի կանոնների խախտումների շարքին,նա նույնպես համաձայնեց Ռ.Խալաթյանի առաջարկին:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 1

Ձեռնպահ – 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. 07.07.2017թ. թիվ 10/11763-17 գրությամբ՝ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահսցեյագրված «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝13.07.2017թ-ին Նելլի Սիմոնյանից ստացված դիմումը քաղաքացի Նելլի Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթի արդյունքներով՝

Պարտապանի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը գույքագրելու այն պահպանելու ընթացքում կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով:

Անշարժ գույքի և նրա ներսում տեղակայված գույքի գույքագրման,պահպանության վերաբերյա պատշաճ տեղեկատվություն չապահովվելու առումով կառավարչը թույլ է տվել Կանոնագրքի 1-ին հոդվածի 1.7 մասի խախտում:

Առաջարկվում է վերոգրյալ խախտման համար հայտարարել բանավոր նկատողություն և սահմանել մեկ ամսյա ժամկետ այն վերացնելու համար:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան